# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/134 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի հունվարի 16-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/134-4 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հուլիսի 2-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ գնման առարկա հանդիսացող ապրանքի լրացուցիչ քանակության ձեռքբերման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Կատարված փոփոխությունների արդյունքում.

- Պայմանագրի 3.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «3.1 Պայմանագրի գինը կազմում է 23,684,357.64 (քսաներեք միլիոն վեց հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր հիսունյոթ դրամ վաթսունչորս լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

  Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

  Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:
- Պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը 10-րդ չափաբաժնի մասով փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագիր 2-ի Հավելված 1-ի:
- Պայմանագրի Հավելված N 3-ով և Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունվարի 30-ին կնքված N 1 Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը 10-րդ չափաբաժնի մասով փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագիր 2-ի Հավելված 2-ի:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 8.5 կետի համաձայն:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**